

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՖԻԶԻԿԱՅԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) ֆիզիկայի ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը (այսուհետ՝ ինստիտուտ) ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Ինստիտուտը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ԵՊՀ-ի կանոնադրության, ֆակուլտետի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

3. Ինստիտուտի կանոնադրությունը, դրանում կատարվող փոփոխությունները և լրացումները հաստատվում են ԵՊՀ գիտական խորհրդում:

4. Ինստիտուտը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

5. Ինստիտուտի պաշտոնական անվանումն է՝
հայերեն՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ (ՖԳՀԻ)

ռուսերեն՝ Научно-исследовательский институт физики (НИИФ) факультета физики ЕГУ
անգլերեն՝ Scientific-research Institute of Physics (SRIP) of the Faculty of Physics of YSU

6. Ինստիտուտի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1:

7. Ինստիտուտը սահմանված կարգով կարող է ունենալ իր անվանմամբ դրոշմակնիք՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով և պաշտոնաթուղթ:

II. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

9. Ինստիտուտն իր իրավասության շրջանակում իրականացնում է գիտահետազոտական գործունեություն հետևյալ ուղղություններով.

- Ատոմներում քվանտային միկրոպրոցեսորների ղեկավարում, ատոմական օպտիկա, քվանտային ցրումներ քվազիմիաչափ կառուցվածքներում, քվանտային մակրոերևույթներ աստղաֆիզիկայում, կիսահաղորդչային նանոչափ կառուցվածքների ստացման և հետազոտման տեխնոլոգիաներ:

- Հեղուկ բյուրեղային (ՀԲ) ֆոտոնային կառուցվածքների, մանրանրբին օպտոէլեկտրոնային տարրերի և լազերային ճառագայթման աղբյուրների ստեղծում: Լազերով մակաձված նոր հիդրոդինամիկական երևույթների ուսումնասիրում ՀԲ-ներում:

- Ռենտգենյան հետազոտություններ, պինդ մարմնային նանոհամակարգերի տեսական հետազոտություններ, ցածր ջերմաստիճանային (այդ թվում գերհաղորդականության) և մագնիսական հետազոտություններ, գիտական սարքաշինություն, նյութաբանություն:

- Աստղաֆիզիկական նոր օբյեկտների հայտնաբերում, սպեկտրային, գունաչափական, ձևաբանական, կինեմատիկական և վիճակագրական հետազոտություններ

- Գրավիտացիայի տեսություններ և դրանց աստղաֆիզիկական ու կոսմոլոգիական կիրառություններ, վակուումային քվանտային երևույթներ արտաքին դաշտերում, էլեկտրամագնիսական պրոցեսներ բյուրեղային միջավայրերում, ինտեգրվող համակարգեր:

- Թաղանթների ձևագոյացման ուսումնասիրում:

- ԴՆԹ-լիզանդ կոմպլեքսների կառուցվածքի, G-քվադրուպլեքսների առաջացման լիպիդային թաղանթների հատկությունների և սինթետիկ պոլիմերների կառուցվածքի ուսումնասիրություններ, կենսապոլիմերներում կոնֆորմացիոն անցումների մոդելավորում:

- Սոլիտոնային և սիմիլարիտոնային երևույթների հետազոտություններ, ոչ գծային օպտիկական Ֆուրյե-փոխակերպման տիպի երևույթների ուսումնասիրություններ ֆեմտոպարկյանային ժամանակային տիրույթում:

- Գծային և ոչ գծային մոտարկումներ և դրանց կիրառություններ:

10. Ինստիտուտն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը, ֆակուլտետի կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և Ինստիտուտի կանոնադրությանը:

11. Ինստիտուտի ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվող հատկացումները, Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած բարեգործական հատկացումները, նվիրատվությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրները: ԵՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ Ինստիտուտին կարող են հատկացվել ֆինանսական միջոցներ, որոնք Ինստիտուտը տնօրինում է սահմանված կարգով:

III. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Ինստիտուտի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության, ԵՊՀ կանոնադրությանը, ֆակուլտետի կանոնադրությանը և Ինստիտուտի կանոնադրությանը համապատասխան, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

14. Ինստիտուտի կառավարման մարմիններն են Ինստիտուտի գիտական խորհուրդը և տնօրենը, որոնք իրենց իրավասության սահմաններում ընդունում են ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը, ֆակուլտետի կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և սույն կանոնադրությանը:

15. Ինստիտուտի գիտական խորհուրդն իր իրավասության շրջանակում քննարկում և լուծում է Ինստիտուտի գործունեությանն առնչվող հիմնական հարցերը:

16. Գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: Գիտական խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել 34-ը: Գիտական խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազմի 50 տոկոսը:

17. Գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են տնօրենը՝ որպես նախագահ, տնօրենի տեղակալը, արհբյուրոյի նախագահը, Ինստիտուտի լաբորատորիաների ղեկավարները:

18. Գիտական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել Ինստիտուտի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու արտաինստիտուտային մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 15 տոկոսի չափով:

19. Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունները համամասնորեն առաջադրում են Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի: Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել բացառապես տվյալ ստորաբաժանման հիմնական գիտական աշխատողները:

20. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ տնօրենը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում գիտական խորհրդի անդամների ցուցակը:

21. Գիտական խորհրդի քարտուղարին գիտական խորհրդի անդամներից տնօրենի ներկայացմամբ նշանակում է ռեկտորը:

22. Ինստիտուտի գիտական խորհուրդը՝

ա) ընդունում է Ինստիտուտի զարգացման ծրագիրը,

բ) քննարկում է Ինստիտուտի լաբորատորիաների գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները,

գ) իր կազմից ձևավորում է մշտական և/կամ ժամանակավոր հանձնաժողովներ,

դ) հաստատում է տնօրենի ներկայացրած՝ Ինստիտուտի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի կազմը, որը սահմանված կարգով իրականացնում է Ինստիտուտի գիտաշխատողների աշխատանքի ընդունման մրցութային գործընթացը,

ե) սահմանված կարգով իրականացնում է Ինստիտուտի գիտաշխատողների համակազմի ընտրությունը՝ հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի որոշումը,

է) լսում է Ինստիտուտում կատարվող գիտական թեմաների վերաբերյալ հաշվետվություններ, դրամաշնորհների, գիտակրթական գործուղումների վերաբերյալ հաղորդումներ,

ը) լուծում է Ինստիտուտի գիտահետազոտական, գիտակրթական աշխատանքի, արտահամալսարանական և միջազգային գործունեության այլ հարցեր:

23. Ինստիտուտի գիտական խորհրդի նիստերը հրավիրում է տնօրենը՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան չորս անգամ մեկ ուսումնական տարում:

24. Գիտական խորհրդի նիստերն իրավագոր են նրա անդամների երկու երրորդի ներկայության դեպքում:

25. Ինստիտուտի գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդն այլ որոշում չի կայացրել: Գիտական պաշտոնների տեղակալման, ընտրության մրցույթների քվեարկությունը կատարվում է փակ, գաղտնի ընթացակարգով:

26. Գիտական խորհրդի նախագահի՝ նիստի հրավիրման անհնարինության դեպքում գիտական խորհրդի նիստը հրավիրում և վարում է տնօրենի տեղակալը:

27. Գիտական խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել համալսարանի ռեկտորը, պրոռեկտորը, ինչպես նաև հրավիրված այլ անձինք:

28. Գիտական խորհրդի որոշումները պարտադիր են Ինստիտուտի ստորաբաժանումների և աշխատողների համար:

29. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են նախագահը և քարտուղարը: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ԵՊՀ-ի պաշտոնական կայքում:

30. Ինստիտուտի լաբորատորիաների վարիչների ընտրությունը կատարվում է Ինստիտուտի գիտական խորհրդի նիստում, փակ գաղտնի քվեարկությամբ:

31. Ինստիտուտի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է տնօրենը՝ իր իրավասության շրջանակում և Ինստիտուտի կանոնադրությանը համապատասխան: Տնօրենն ունի տեղակալ:

32. Ինստիտուտի տնօրենի թեկնածությունն առաջադրում է Ինստիտուտի գիտական խորհուրդը: Տնօրենն ընտրվում է ֆակուլտետի գիտական խորհրդում մրցութային կարգով

փակ գաղտնի քվեարկությամբ՝ ֆակուլտետի ղեկանի ընտրության համար սահմանված ընթացակարգով:

33. Տնօրենին աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է ԵՊՀ ռեկտորը՝ հիմք ընդունելով ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը:

34. Տնօրենի պաշտոնում կարող է առաջադրվել գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձը, ով Ինստիտուտում կամ ֆակուլտետում լաբորատորիայի վարիչի պաշտոն չի զբաղեցնում:

35. Ինստիտուտի տնօրենը՝

1) կազմակերպում և վերահսկում է Ինստիտուտի գիտական, գիտակրթական, միջազգային և այլ գործունեությունը,

2) ապահովում է Ինստիտուտի գիտական խորհրդի որոշումների կատարումը,

3) ԵՊՀ ռեկտորին առաջարկություն է ներկայացնում Ինստիտուտի հաստիքացուցակի վերաբերյալ,

4) ԵՊՀ ռեկտորին առաջարկություն է ներկայացնում Ինստիտուտի կառուցվածքում լաբորատորիաներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու վերաբերյալ,

5) հաստատում է լաբորատորիաների գործունեության տարեկան ծրագրերը,

6) սահմանված կարգով տնօրինում է Ինստիտուտին հատկացված ֆինանսական միջոցները՝ այդ մասին հաղորդում ներկայացնելով ֆակուլտետի գիտական խորհրդին,

7) լուծում է Ինստիտուտի կանոնադրությունից բխող և Ինստիտուտի գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

IV. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

36. Ինստիտուտի հիմնական ստորաբաժանումներն են լաբորատորիաները:

37. Լաբորատորիաները Ինստիտուտի գիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնց ստեղծման և գործունեության կարգը, ինչպես նաև իրավասությունը սահմանվում է Ինստիտուտի կանոնադրությամբ:

38. Լաբորատորիաների կազմում ընդգրկված են գիտաշխատողները և լաբորանտները:

39. Լաբորատորիաները մշակում են իրենց գործունեության տարեկան ծրագիրը և ներկայացնում տնօրենի հաստատմանը:

40. Լաբորատորիաների գործունեության հիմնական հարցերը քննարկվում են լաբորատորիաների համակազմի նիստերում, որոնց նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Ինստիտուտի տնօրենը կամ տեղակալը:

41. Ինստիտուտի կանոնադրությանը կից հավելվածի տեսքով ներկայացվում են Ինստիտուտի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՖԳՀԻ կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1. Քվանտային երևույթների հետազոտման և մոդելավորման գ/հ լաբորատորիա,

2. Մակրոմոլեկուլների ֆիզիկայի գ/հ լաբորատորիա,

3. Պինդ մարմնի ֆիզիկայի գ/հ լաբորատորիա,

4. Տեսական ֆիզիկայի գ/հ լաբորատորիա,

5. Օպտիկա և ֆոտոնիկայի և ֆոտոնիկայի գ/հ լաբորատորիա,

6. Գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի գ/հ լաբորատորիա,

7. Գծային և ոչ գծային մոտարկման և դրանց կիրառման գ/հ լաբորատորիա,

8. Թաղանթների ձևավորման գ/հ լաբորատորիա,

9. Աստղաֆիզիկական հետազոտությունների գ/հ լաբորատորիա: